հան մի եւ վերեւն զանկակ մի. անդ զնեն
զաղայն եւ զարնեն զանկակն. խկոյն իմանան
եւ զան առնուն տանին զրիճն փութով եւ
110 սնուցանեն կաթամբք այծից եւ ոչխարացն,
մինչեւ զարգասցի եւ ի չափ հասակի հասցէ:
Ապա մայրապետն կոչէ զամենայն կուսանս.
կոչէ եւ զաղայն ի պոռնկութենէ ծնեալ ա-
ռաջի իւր, թէ արու լինի եւ թէ էգ. եւ ասէ
115 ցնոսա. Որդեակք իմ եւ դստերք, գիտէք զի
մեք չեմք ձեր մայրք, այլ դուք այսպիսի
ծնունդք էք: Եւ զամենայն մի ըստ միոջէ ծա-
նուցանէ նոցա. ապա քարոզէ նոցա զօրէնս
եւ զպատուիրանս Աստուծոյ. այլ եւ ցուցանէ
120 նոցա զճանապարհն Աստուծոյ եւ զաշխար-
հիս՝ զհոգեւորն եւ զմարմնաւոր: — Զի աշ-
խարհն Ֆռանկի կոյս աղջկունք եւ կանայք
բուն վարդապետք են. եւ չկայ մարդ մի որ
կարդալ չգիտնայ. նաեւ համարնին, կէմի-
125 ճիքն, խաթբրճիք եւ հովիւքն եւս: — Դառ-
նա՝ եւ ասէ դարձեալ.

Ով որդեակք, մինչեւ ցայս տիմար եւ
տգէտ էիք. եւ արդ իմաստուն եւ կատարեալ
էք. որ գիտէք զչարն եւ զբարին. զի մեք
130 վասն Աստուծոյ սիրուն պահեցաք զձեզ եւ
սնուցաք եւ որպէս մայր զամենայն չարչա-
բանս ձեր յանձն առաք. այլ եւ զսուրբ գիրս
ուսուցաք ձեզ: Արդ այժմիկ ասացէք մեզ
զի՞նչ է կամք ձեր. կամի՞ք աստ մնալ եւ ծա-

133 յայժմիկ: